



ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ
АРЦАХСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ



ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԸ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ



$$E=mc^2$$



3 (16) 2007

ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏ
СТЕПАНАКАЕРТ

Արցախի պետական համալսարան
Арцахский государственный университет

Գիտական տեղեկագիր
Ученые записки

№ 3 (16)

ՆՅՈՒԹԵՐ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻ և ԳԻՏԱԺՈՂՈՎՔԻ

Ապրիլ 12-14, 2007թ.

Ստեփանակերտ

Степанакерт

ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆԹԱՅՑՈՒՄ

Ա.Հ. Հարությունյան

Ակաած 2006թ. դեկտեմբերի 10-ից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն իր Սահմանադրության ընդունումով թևակոխություն է իրավական կյանքի մի նոր փուլ: Օրակարգի խնդիր է դարձել այն գաղափարների իրականացումը, որոնք տեղ են զտել Սահմանադրության մեջ և որոնք միտված են մեր երկրի ներքին կառուցվածքի կատարելագործմանը, նրա միջազգային հեղինակության բարձրացմանը: Մյուս կողմից պնտը է շարունակել կառուցնել այն ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետությունը, որի հիմքնը դրվել են վերջին տասնամյակներում:

Իրավական պետության դերին հավակնող աշխարհի գրեթե բոլոր պետությունները իրենց Սահմանադրության մեջ հռչակում են որպես իրավական պետություն և այդ նպատակով մշակում են նոր տեսություններ ու հայեցակարգեր, որոնք ուղղված են դրանց իրականացմանն ու հետազա կատարելագործմանը: Մեր պարագայում դա բացառություն չէ, սակայն, ի տարրերություն բազմաթիվ այլ երկրների, ԼՂՀ-ն՝ որպես ինքնիշխան պետություն, տակալին երիտասարդ է և շատ բան ունի սովորելու աշխարհի զարգացած ժողովրդավարական երկրներից, դրանք մեր երկրում տեղայնացնելու: Չնայած այս ամենին՝ իրավական պետություն կառուցնելու ուղղությամբ երկրում որոշակի քայլեր արվում են, սակայն այդ համատենքստում կա մենքը, որք թիւ է ուսումնասիրված ու արժանի է առանձնակի ուշադրության: Խոսքը վերաբերում է իրավական դաստիարակությանը, որի մասին էլ կիսում առողջությունը:

Որպեսզի ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ ավելի հստակ պատկերացում ստացվի, նպատակահարմար ենք գտնել այն պայմանականորեն տրոհել հետևյալ մասնիք:

1. առաջ քաշել թեմայի խնդիրը,
2. հիմնավորել դրա հրատապությունը,
3. առաջ քաշել դրա լուծման տարրերակներ,
4. ինչ զանկալի արդյունքի կհասցնեն առաջ քաշված տեսակետները:

Նախըան իրավական դաստիարակությանն անդրադառնալը, հոգեբանության լեզվով ներկայացնենք, թե ինչ ասել է «դաստիարակություն»:

Մանկավարժական և հոգեբանական բնութագրումներով դաստիարակությունը անձի սոցիալականացման, անձի՝ որպես հասարակության անդամի կայացման ամենակարևոր պայմաններից մենք ենք: Դա գործունեություն է՝ ուղղված նոր սերունդներին պատմահասարակական փորձի հաղորդմանը, որն իրականացվում է մարդու գիտակցության և վարքի վրա պահանաջափ և նպատակաւողված ներգործության միջոցով նրա մեջ որոշակի դիրքորոշումներ ձևավորելու նպատակով [4, էջ 130]:

Քաղաքացիների դաստիարակությունն իրականացվում է միասնական, համընդգրկուն համակարգի շրջանակներում: Եթե այն տրոհենք առանձին բաղկացուցիչ մասնիք, ապա կարենի է երևան քննել տարբեր, դաստիարակության՝ համամատաբար ինքնուրույն տեսակներ. իրավական, քաղաքական, քարոյական, աշխատանքային, գնդագիտական և այլն: Այս առանձին դաստիարակչական գործընթացներից յուրաքանչյուրն օժտված է մի շարք առանձնահատկություններով, որոնք բխում են կիրառվող դաստիարակչական ձևերի, միջոցների, մեթոդների և սկզբունքների տարրերությունից: Եթե դաստիարակության այս բոլոր ձևերի համար ընդհանուրը դաստիարակության օբյեկտն է՝ անձն իր գիտակցությամբ և հոգեկանով, ապա դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունը հանդիս է զալիս դաստիարակության համապատասխան նշանակուվ:

Իրավական դաստիարակության հիմնական բովանդակությունն է՝ մարդկանց հաղորդակից դարձնել պետության, իրավունքի, օրինականության, իրավակարգի, անձի իրավունքների, պատասխանությունների և պարտականությունների մասին գիտելիքների հետ:

Պետության և իրավունքի տնօտելյան մեջ կա կարծիք (Ն.Լ.Գրանտ), համաձայն որի՝ փրավական դաստիարակության տակ ընդունված է հասկանալ պետության, նրա մարմինների և ծառայողների, հասարակական կազմակերպությունների և աշխատավորական կոլեկտիվների նպատակառության ու համակարգված գործունեությունը՝ իրավագիտակցության և իրավական կուլտուրայի ձևակրթման և բարձրացման համար» [6, էջ 395]:

Ազգաբնակչության իրավական դաստիարակության, իրավագիտակցության ձևակրթման զաղափարը դարավոր պատմություն ունի: Պատմականորեն մարդկության մեծ մտածողների գիտակցության մեջ իրենց արտահայտությունն են գտնի զաղափարներ մարդու իրավունքների, ազատությունների և արժանապատվության մասին: Մեզ արժեքավոր մտքեր են թողել Պլատոնը, Արիստոտելը, նաև ավելի ուշ դարաշրջանի մտածողներ: Մասնավորապես, Պլատոնը հաստատում է, որ «իմաստունին օրենք պետք չէ. նա ունի բանականություն», որը կարելի է մեկնաբանել պետության կառուցվածքի վերաբերյալ մեծ մտածողի լավագույն զաղափարների հետ, որտեղ կառավարում են փիլիսոփաները, իմաստուն մարդիկ, ովքեր մշակում են արդարամիտ օրենքներ [7, էջ 451]:

Հին հումանիզմ իրավաբանների փորձը ցույց է տալիս, որ իրավագիտակցության դաստիարակությունը անհրաժեշտ է սկսել որքան հնարավոր է վաղ ժամանակում: Հիշենք, թե ինչպես էր դա արքում Հին Հռոմում. 12 առյուսակների օրենքը տեղադրված էր քաղաքային իրավաբանակում և քաղաքացիների շարքերն ընդունվող յուրաքանչյոր պատանոց պահանջվում էր օրենքների բնականացի վերաբանություն, իմացություն: Նրանք գտնում էին, որ առանց օրենքների իմացության հնարավոր չէ կատարել քաղաքացու պարտականությունները, հատկապես՝ դաստական: Դատարանում քաղաքացին արդեն չէր կարող «պատճառաբանել օրենքի չիմացությունը» [9, էջ 79-80]:

Այսպիսի մոտեցումն իրենից ներկայացնում է առավել արդարացի ու մարդասիրական, քան այն, որն այսօր հիմնված է հետևյալ կանխադրությամբ վրա: «օրենքի չիմացությունը չի պատում պատասխանատվությունից»:

Իրավական դաստիարակության և իրավական կուլտուրայի վերաբերյալ մտքեր կարելի է գտնել նաև գեղարվեստական գրականության մեջ: Ֆրանսուա Ռաբեն իր «Գարզանսյուա և Պանտագրունի» փիլիսոփայական վեստում, նկարագրելով Թելենի վանրի անդամների կենսակերպը, նշում է, որ «նրանց ամբողջ կյանքը ոչ ենթարկվել է օրենքներին, ոչ կանոնադրություններին և ոչ էլ կանոններին, այլ նրանց սեփական բարի կամքին և զանկությանը», իսկ վաճառի կանոնադրությունը բաղկացած էր միայն մեկ կանոնից. «Արա, ինչ ուզում ես» [7, էջ 451]: Իհարկե, այս կանոնում արտահայտություն է գտնել կրթված անհատականության զաղափարը, որը հստակ գիտի իր անելիքների շրջանակը:

Ժամանակակից պայմաններում, եթե 2006թ. դեկտեմբերի 10-ի հանրաբենով ընդունված Սահմանադրությամբ լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հրչակել ենք որպես իրավական պետություն (հոդված 1-ին) [1, էջ 3], առաջնակարգ նշանակություն է ձեռք բերել բնակչությանը բարձր իրավագիտակցությամբ դաստիարակելն ու իրավական իրազեկվածության առանձինությունը, նաև այն, որ իրավական դաստիարակության ուժնեցումը և օրինականության ամրապնդումը հանդիսանում են պետական կարևորագույն հիմնայինդիքներից մենքը:

Այս համատերասուում իրավական պետությունը կարելի է բնորոշել որպես մի միջավայր, որտեղ քաղաքացիներն օժտված են իրավագիտակցության բարձր մակարդակով և հասարակության առջև պատասխանատվության զգացումով, բարոյական բարձր հատկանիշներով: Այդ իսկ պատճառով բոլոր քաղաքացիներին հասարակական և իրավական գիտակցությամբ դաստիարակելը դառնում է իրավական պետության կառուցման քաղաքարամանը մենքը:

Իրավական հայկական պետության արագ ձևավորումը զգալի չափով պայմանավորված է նրա քաղաքացիների իրավական դաստիարակության մակարդակի բարձրացմամբ, իրավունքի, օրենքի հանդեպ բարձր հարգանքի ոգով դաստիարակմամբ, օրենքների իմացությամբ և դրանց անշեղ հետևմամբ ու կատարմամբ: Կարևոր է նաև խոր ըմբռնումն այն բանի, որ իրավակարգի և պետական կարգապահության ամրապնդումը հանդիսանում է պետության առջև դրված հիմնախնդիրների հաջող կատարման անհրաժեշտ նախապայման: Իրավական դաստիարակությունն անհրաժեշտ է քաղաքացիական հասարակության մեջ օրինականության ամրապնդման, արդարության հաղթանակի, այնպիսի բարոյական մշտողորտի հաստատման համար, որը մարդը կարող է ազատ ապրել և արգասաքնը աշխատել [5, էջ 58]:

Բնական է, որ անհատը իրավունքի մասին սկզբնական տեղեկություններ ստանում է ընտանիքում, հետո իրավական դաստիարակության գործին «վճիռ» են մյուս սուբյեկտներ՝ պնտություն, սոցիալական միավորումներ, որիշ անհատներ: Իսկ ծնողները և մերձավոր բարեկամները երեխայի մեջ դաստվաստում են բարոյական հիմքներ, որի վրա ձևավորվում են իրավագիտակցության տարրերը: Ծնողների մի մասը երեխայի մեջ դաստիարակում է բարոյագիտական (էթիկական), մշակութային և բարոյական նորմեր՝ քիչ ուշադրություն դարձնելով հայրենասիրության և՝ իրավունքի դաստիարակությանը:

Այն բանից հետո, եթե երեխան դուրս է գալիս ընտանիքից և հայտնվում այնպիսի իրադրությունում, եթե անհրաժեշտ է սոցիալականացում, նրա դաստիարակությամբ զբաղվում են արդեն կրթված, արհեստավարժ մասնագետները: Եվ որքան այն վաղ տարիքում իրականացվի, այնքան շուտ կունենանք իրավադաստիարակված քաղաքացիներ, հասարակություն, հետևաբար և ամոր իրավակարգ:

Եթե իրավական դաստիարակությունը չմտցվի դպրոցական կրթության ամենավաղ փուլերում, ապա մարդը կդառնա այսպես ասած «կենցաղային իրավադաստիարակության գոհ», որի հիմնական կատունքորիհան հանդիսանում է ժողովրդական «իմաստությունը», որը փոխանցվում է սերնդներուն: Ծայրահետ ցածր իրավագիտակցության մակարդակով ծնողները չեն կարող իրենց երեխաներին դաստիարակել իրավունքի ոգով: Նոյնիսկ ընտանիքում երեխաները տեսնում են հարաբերության ոչ իրավական կողմը: Ընտանիքում, կենցաղային, փողոցային հարաբերություններում երեխաների հարցերի լուծումը շատ հաճախ տեսնում են ուժի կիրառման տեսանկյունից: Ինչպես տառմ է ճապոնական իմաստությունը՝ այնտեղ, որտեղ ուժի իրավունքն է, չկա իրավունքի ուժ:

Քանի որ իրավական դաստիարակության գործում զգալի տեղը պատկանում է դպրոցին, իսկ այս կրթարանում անհրաժեշտ է, որ նրա հետ ուղղակի և անուղղակի ձևով կապված ամեն որ իմանա իր իրավունքները, պարտականությունները, ուստի կարևոր է դպրոցի տեսանելի մի անկյունում կախել այսպես կոչված «իրավունքների մասին բիլ», որտեղ ամրագրված կիխնեն աշակերտների, ուսուցիչների, դպրոցի տնօրինության և սովորողների ծնողների իրավունքները, նաև պարտականությունները, իսկ այդ իրավունքներին անշենորդն հետևելը կդառնա դպրոցի «հավատող հանգանակը»:

Այն կազմակերպություններն ու անձինք, որոնք կոչված են զբաղվելու բնակչության իրավական դաստիարակությամբ, պնտը է պայքարեն մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի խարսիաներում նախատեսված իդեալների հաստատման, անձի և պնտության միջև փոխհարաբերությունների հաստատման համար, քացառությամբ իրավական նիկիլիզմի, որին հետևում են կամայականությունը, անկարգությունը, քառոր:

Մեր երկրում շատ կարևոր է, որ այդ գործունեությամբ սկսեն զբաղվել ապագա արհեստավարժ իրավաբանները: Պետք է զգտել նրան, որ, սովորելով իրավաբանական բաժնում, նրանք իրենց ապագա գործունեության հիմնական նպատակը տեսնեն զաղափարների բարոզչությունը, որը կոչված կիխնի պաշտպանելու մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները ամեն հնարավոր կամայականությունից: «Նրանց կյանքի հիմնական ու անփոփոխ հայացքը պետք է դառնա թույլի պաշտպանությունը ուժինից, որը հանդիսանում է համաշխարհային, համամարդկային բարոյականության և մշակութի կանխադրույթներից մենք» [8, էջ 335]:

Իրավական դաստիարակությունն ուղղակիորեն և անուղղակիորեն ազդում է կյանքի տարբեր ոլորտներում մարդու զիտակցության և գործունեության ձևավորման վրա: Պատահական չէ, որ իրավական համակարգի նորացման պայմաններում մեր հասարակության զարգացման հիմնահարցների մեջ մասն անմիջապես կապված է ընդհանրապես իրավագիտակցության բարձրացման անհրաժեշտության հետ:

Այս կապակցությամբ ծագում են մի շարք հարցեր: Ինչպիսի՞՛ են նրա՝ իրավական դաստիարակության հիմնական գծերը: Ինչպիսի՞ն է նրա դերը իրավական հայկական պնտության ձևավորման ուղղություններից յուրաքանչյուրի իրազորման մեջ:

Պատահանելով առաջին հարցին՝ հայ իրավագետ Ն.Ա.Ապիյանը նշում է, որ իրավական դաստիարակությունը բնութագրում է անձի ներքին համոզվածության, զիտելիքների և հիմունքունների բարձր մակարդակ, ինչն իրազործվում է իրավական ոլորտում և առանձինություն է կյանքում հասարակական իդեալների և արժեքների մարմնավորումը:

Կարևոր է ընդգծել, որ իրավական դաստիարակությունը ոչ միայն իրավական մտածողության բարձր աստիճանն է, այլև ամբող իրավական գործունեության նույն բարձր

որակն է՝ անկախ այն բանից, թե կոնկրետ ով է այն իրականացնում պետությունը, թե՝ հասարակական մարմինը, պաշտոնատար անձը, քաղաքացիների խումբը, թե՝ առանձին մարդը [2, էջ 25]:

Իրավադաստիարակչական գործունեության և իրավական կուլտուրայի տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն այն մարդկանց բարոյական հատկանիշները, որոնք իրականացնում են տվյալ գործառույթները: Հենց այս առումով պետք է գնահատեն դատարանի, դատախազության, ներքին գործերի մարմինների աշխատակիցների գործունեությունը [11]:

Դաստիարակչական ներգործության օբյեկտների առանձնահատկությունները կանխորոշում են իրավունքի յուրաքանչյուր ճյուղի դաստիարակչական գործառույթի ուղղվածության առանձնահատկությունը, մասնավորապես՝ քրեական իրավունքի: Տվյալ դեպքում այն արտահայտվում է, ոչ միայն բարոյականության և իրավագիտակցության մակարդակի բարձրացմամբ, քաղաքացիների իրավական կուլտուրայի հետագա զարգացմամբ, այլև քրեական իրավունքի պահանջների տեսանկյունից՝ իրավախախումների, բացառական վարքագծի դրսորման նպաստազգուշացման և դրանց վերացման մեջ:

Քրեական իրավունքի շատ ինստիտուտներ, որոնք հատկանի վերաբերում են քրեական պատասխանատվությանը, պատժի նշանակմանը, քրեական պատասխանատվությունից և պատժից ազատմանը, ակտիվորեն խթանում են հանցագործություն կատարած անձանց ուղղմանն ու վերադաստիարակմանը:

Օրենսդրության ճյուղների մանկավարժական բովանդակությունը և դաստիարակչական ուղղվածությունը, որոնք կարգավորում են հանցագործությունների և այլ իրավախախումների դեմ պայքարը, պահանջում են ոչ միայն դաստիարակչական գործառույթների իրականացման մեխանիզմների խոր մշակում, այլև իրավաբանների, մանկավարժների և հոգեբանների կողմից մանկավարժական կատեգորիաների և հասկացությունների բազմակողմանի իմաստավորում, որոնք լայնորեն կիրառվում են քրեական իրավունքում:

Դաստիարակչական մեծ դեր ունի նաև դատարանը՝ դատավճիրների ընդունման և կատարման փուլում: Եթե հարցմենք այն մարդուն, որի նկատմամբ արդարացի, մարդասիրական դատավճիր է կայացվել, ապա նա կապատասխանի, թե դաստիարակչական ինչպիսի մեծ ներգործություն է ունեցել: Գիտակցելով դա՝ հետազայում նա ձեռնպահ կմնա համացվոր քայլերի դիմելուց:

Իրավական հայկական պետության ձևավորումը ներքադրում է հասնել իրավադաստիարակչական գործունեության բարձր մակարդակի: Տվյալ գործընթացում կարելի է առանձնացնել մի քանի առաջնային ուղղություններ: Իր կարևորությամբ և որոշիչ ներգործությամբ առաջինը հասարակության գիտակցության մեջ իրավունք՝ որպես անանցողիկ սոցիալական արժեքի սերմանումն է, առանց որի չեն կարող հաստատվել ժողովրդավարական հասարակարգներին բնորոշ արժեքները՝ սոցիալական արդարությունը, ազատությունը, հավասարությունը, իրապարականությունը, ժողովրդավարական այլ իդեալներն ու սկզբունքները [5, էջ 66]:

Իրավական դաստիարակության ինստիտուտի գարգազման երկրորդ ուղղությունը կարելի է համարել իրավաստեղծ, օրինաստեղծ գործընթացի կատարելազործումը: Այս տառումով անհրաժեշտ է ապահովել իրավաստեղծ գործընթացի կատարելազործումը, ինչպես նաև օրենքների և ենթաօրենքներական ակտերի որակը [5, էջ 68]:

Անձի իրավական ձևավորման վրա վիթխարի ազդեցություն է ունենում այն հոգևոր մշնոլորտը, այն իրավական կիմման, որը զերիշխում է տվյալ հասարակությունում: Որքան ամուր է իրավակարգը հասարակությունում, որքան բարձր է նրա անդամների կազմակերպվածությունն ու կարգապահությունը, որքան խորն է հարգանքն օրենքների և օրինականության նկատմամբ, այնքան հաջող է իրավական կուլտուրայի, իրավական գիտելիքների, իրավական համոզմունքի յուրացման գործընթացը: Եվ ընդհակարակը, անօրինականության մշնոլորտը, օրենքների նկատմամբ նիկիլիստական վերաբերմունքը, անհաստատունությունը, անկարգապահությունը խոչընդոտում են անձի իրավական ձևավորման գործընթացին, հարուցում են հակասողիալական ուղղվածություն, հակասողիալական վարքագիծ [10, էջ 136]:

Իրավունքի և այլ սոցիալական նորմերի արհամարհումը, որտեղ ժողովրդավարությունը դրսորվում է հետևյալ բանաձևով՝ «Ուզում եմ, որ ինի այն, ինչ ցանկանում եմ», արգելք է

հանդիսանում քաղաքացիական հասարակության, իրավական պետության ձևավորման ճանապարհին [7, էջ 451]: Սոցիալական չարի այս դրսուրուսն անհրաժեշտ է հաղթահարել: Ժամանակակից պայմաններում հասարակության մեջ անհրաժեշտ է հաղթահարել նաև իրավական նիկիլիզմը, դաստիարակել օրենքի նկատմամբ հարգալից վերաբերմունք, պատսխանատվության գիտակցում և զգացում, անհանդուժողականություն դեպի կամայականությունը, կաշառակերությունը: Քաղաքացիների առողջ բարոյականության և իրավագիտակցության ձևավորման հիմքներն են հանդիսանում սոցիալական խաղաղությունը, քաղաքացիների համաձայնությունը, բնակության բոլոր սոցիալական խմբերի համագործակցությունը, ժողովրդի բարենկացության բարձրացումը, մարդու իրավունքների նյութական նրաշխիքների ընդլայնումը:

Իրավական դաստիարակության, ընդհանուր կուլտուրայի հետ նրա անխցիկ կապի վրա մեծ ազդեցություն են քողովում զեղարվեստական գրականությունը, զանզվածային լրատվամիջոցները, այդ թվում և հետուատատնությունը, ռադիոն, մամուլի իրապարակումները: Իրավագիտակցության դաստիարակությունը հանդիսանում է ամբողջ հասարակության մշակութային կյանքի բարկացուցիչ մասը, պետության սոցիալական գործառույթը, որը հոգ է տանում աճող սերնդի մասին: Մեծահանակ քաղաքացիների իրավական կրթվածությունը նույնպես դաստիարակչական նշանակություն ունի հասարակության զանգվածային գիտակցության վրա: Դաստիարակչական աշխատանքը բարձրացնում է անձի անհատական իրավագիտակցությունը մինչև առավել ընդհանուր իրավական սկզբունքների և պահանջների հասկանը, որը համապատասխանում է ամբողջ հասարակության և պետության շահերին: Իրավունքի, օրինականության ոգով դաստիարակելը չի սահմանափակվում իրավական կրթվածությամբ, որը ձևավորում է դրական վերաբերմունք օրենքի և իրավունքի նկատմամբ, այլ իր ավարտն է գտնում անձի իրավական ակտիվության, նրա իրավական կուլտուրայի մեջ: Անձի իրավական կուլտուրան արտահայտվում է նրա կողմից իրավական գիտելիքների յուրացմամբ, օրենքի, իրավունքի նկատմամբ հարգալից վերաբերմունքով, իրավունքի նորմերի գիտակցական կատարմանը հետևելով, սոցիալական և իրավաբանական պատասխանատվության հասկացողությամբ, իրավախստման նկատմամբ անհանդուժողական վերաբերմունքի դրսուրմամբ և նրա դեմք պայքարելով:

Քանի որ իրավական դաստիարակության հետ սերտորեն կապված է նաև իրավական կուլտուրան, ուստի քաղաքացու մոտ իրավական կուլտուրայի ձևավորման անհրաժեշտ նախապայմաններ կարող է հանդիսանալ հետևյալը, որին պայմանականորեն անվանում ենք առաջին:

- սեփական անձի հարգումը,
- գիտակցված հարգանք դիմացի նկատմամբ,
- ազգային սովորույթների և ավանդույթների իմացություն և հարգում,
- հարգալից վերաբերմունք շրջապատի քնական պաշարների նկատմամբ,
- արիենտավարժություն (արոքնեխնալիզմ), ինտենսիվ զարգացում:

Այս վերոհիշյանը նրկորորդ փուլում անձին կօգնի, որպեսզի նա իրավապաշտությունից անցնի իրավաստեղծ պահվածքի:

Երրորդ փուլը դրսուրվում է անձի կողմից այնպիսի պահվածքի դրսուրմամբ, որը կնախաձեռնի «Քաղաքացիական օրենսգրքի» որպես պետական դաշտի հիմնարար օրենքի ըմբռնումը, հարգումը, պաշտպանությունը և այլն:

Իրավական պետության ձևավորման և կայացման պարագայում իրավական դաստիարակությունը կարելի է դիտարկել որպես մի նպատակ, որի իրականացման համար անհրաժեշտ է դիմել հետևյալ քայլերին՝

1. Համեմատական մոտ օրենսդրության, օրինականության, անձի իրավունքների և ազատությունների մասին կայուն գիտելիքների ստեղծմանը: Օրենքի հեղինակության բարձրացումը, որպես անխախտ սոցիալական արժեք, նրա նկատմամբ հարգանքը, վճռական պայքար է իրավական նիկիլիզմի դեմ:

2. Քաղաքացիների մոտ ստեղմել իրավական վարքագծի նկատմամբ կայուն դիրքորոշում, օրինապահության սովորության ձևավորում, արդարադատությանը և իրավական գործունեության այլ ձևերին մասնակցելու հմտություններ և կարողություններ, ինչպես նաև նրա խախտման ամեն մի դեպքի նկատմամբ բողոքի և անհանդուժողականության մթնոլորտի ստեղծում, պատասխանատվության անխուսափելիություն:

Իրավական դաստիարակությունը գործունեության բարդ և բազմասպակտ ձև է: Այն հանդիսանում է գանկացած պնտության գաղափարախոսական գործառույթի բաղադրամաք և դրսորդիւմ է մի քանի ձևնրով:

1. իրավունքի քարոզությունը ԶԼՄ-ների միջոցով (ամսագիր, հեռուստատեսություն, ռադիո): Այս ձևին բնութագրական են գանգվածային, ավելի լայն լսարանի ընդգրկումը, տարբեր խորագրերի, թեմատիկ գրույցների, լրահաղորդումների օգտագործումը, իրավաբանական հիմնահարցների վերաբերյալ գրականության իրատարակումը (բրոշյուրներ, օրենքների մեջնաբանություններ և այլն),

2. քանավոր իրավական քարոզություն՝ դասախոսություններ, խորհրդառություն, գրույցներ, հարց ու պատասխանի ներեկո և այլն: Լսարանի ընդգրկվածությունն այստեղ չնայած փոքր է, սակայն հնարավորություն է ընձեռվում անմիջականորեն շփմունքների հետ, հետաքրքրող հարցերին անմիջապես տալ պատասխաններ, կատարել մտքերի փոխանակություն, մտնել քանակին մեջ,

3. արհեստավարժ իրավաբանական կրթություն, որտեղ իրավունքի ոլորտի մասնագետներ են պատրաստվում (իրավաբանական ԸՈՒՀ-ներ, ֆակուլտետներ և այլն),

4. քաղաքացիների իրավական կրթություն՝ օրենսդրության ուսումնասիրում հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, տեխնիկումներում և ԸՈՒՀ-ներում: Այս ձևի դրական կողմերն են՝ մշտական լսարան, ծրագրի առկայություն, տնային առաջադրանք, գործնական պարագմունքներ, քննություններ:

5. դիտողական իրավական տեղեկատվություն (իրավախախտների նկարների փականակ, պատի թերթ և այլն),

6. իրավական պրակտիկայի ներգործություն՝ պետության, սահմանադրական դատարանի (ԸՆԴ-ում սահմանադրական պալատ), դատարանների, մյուս իրավապահ մարմինների օրինատեղի գործունեությունը,

7. գրականության և արվեստի ստեղծագործությունների ներգործություն՝ կինոֆիլմեր, թատրոնական ներկայացումներ, հայկական և արտասահմանյան գրողների վեպեր և պատմվածքներ:

Քանի որ կյանքը նույն տեղում չի կանգնում, այլ մշտապես զարգանում ու կատարելագործվում է, ապա մարդկանց գիտակցության վրա ներազնելու բովանդակությունը, օբյեկտը, ձևը և նիշանակները նույնպես փոփոխվում են, դառնում են ժամանակի պահանջներին համապատասխան: Եվ որքան էլ դրանք փոփոխվեն ու կատարելագործվեն, ամբողջությամբ վերցրած դրանց էլությունը մնում է անփոփոխ: Անփոփոխ է նաև հետևյալ կանխադրույթը. իրավական դաստիարակությունն անհմաստ է առանց իրավական ուսուցման [5, էջ 52]: Նրանք օրգանապես կապված են միմյանց հետ: Իրավական ուսուցումը դաստիարակչական արդյունք է ունենում, որը շատ կարևոր է անձի իրավական կայացման համար:

Իրավական դաստիարակությունը ճիշտ ուղղությամբ տանելու և հետազայում ցանկալի արդյունքի համեմելու համար անհրաժեշտ է մշակել այսպես կոչված «Իրավագիտակցության, իրավական դաստիարակության և իրավական կուլտուրայի» պետական ուսումնակարության ծրագիր, որի իրականացմանը պետք է մասնակցեն իրավաբան-գիտնականներ, հոգեբաններ, մանկավարժներ և այլք, և որի սկիզբը կդրվի հենց դպրոցում: Ունենալով հատակ մշակված ուսումնակարություն՝ կարելի է պետական մասշտարկ սկսել իրավական դաստիարակության գաղափարներից անցումը դեպի դրա իրականացում:

Մեր երկրի բոլոր միջնակարգ դպրոցներում մտցված է «Պետության և իրավունքի հիմունքներ» ուսումնական դասընթացի դասավանդումը, որը, բնականաբար, նպաստում է դեռևս պատանեկան տարիներից երեխաների մոտ պետության և իրավունքի վերաբերյալ գիտելիքներ սերմանելուն: Սակայն միայն դասավանդելը բավարար չէ, պետք է համապատասխան քայլեր ձեռնարկել այդ ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման ուղղությամբ, որի իրականացման նպատակով կարող են համագործակցել կրթության, մշակույթի, սպորտի և արդարադատության նախարարությունները:

Անհրաժեշտ է նշել, որ, չնայած իր արդիականության ու իրատապությանը, իրավական դաստիարակության խնդիրը հայրենական իրավագիտության մեջ գրեթե չի ուսումնասիրվել, կարծես դուրս է գիտնականների տեսադաշտից, որոնք գրավվում են դաստիարակության հարցնորդ, իսկ արտասահմանում այն սահմանափակվում է այդ հասկացության ընդարձակ սահմանումներով:

Քանի որ սույն յենման անմիջականորեն կապված է, իրավական պնտության հետ, ապա անհրաժեշտ լ. դիտարկել դրա վերաբերյալ Ն.Ա.Ապիյանի տված ժամանակակից սահմանումը. «Իրավական է համարվում այնպիսի ինքնիշխան պնտությունը, որտեղ ապահովված է օրենքի գերակայությունը, անցկազմական է իշխանությունների տարանջառում, հստակ սահմանված է անձի իրավական կարգավիճակը, մշակված է պնտության և անհատի փոխհարաբերության կառուցակարգը, նրաշխափորված է բոլոր կուտակցությունների իրավահավասարությունը, կանոնակարգված է պնտության միջազգային գործունեությունը և առկա է գործող ժողովրդավարական օրենսդրություն, որը բացառում է ամեն տեսակի բռնություն» [3, էջ 32]:

Նկատելի է, որ սահմանման մեջ որևէ կերպ նշված չէ իրավագիտակցության, իրավական դաստիարակության և իրավական կուլտուրայի մասին որևէ դրույթ, իսկ այն դրույթը ներբռ, որոնք վերաբերում են օրենքի գերակայությանը, անձի իրավական կարգավիճակին, պնտության և անհատի փոխհարաբերության կառուցակարգին, հնարավոր չենկալել որպես վերոհիշյալ հասկացությունների անուղղակի դրսորում: Հաշվի առնելով իրավական պնտության հետ անքանտեղիորեն կապված այն հանգամանքը և այն, որ հնարավոր չեն իրավական պնտության մասին՝ առանց վերոհիշյալ հասկացությունների պատշաճ մակարդակի առանձինության, առաջարկում ենք իրավական պնտության սահմանման մեջ ավելացնել հետևյալ բառակապակցությունը «առկա է իրավագիտակցության, իրավական դաստիարակության և իրավական կուլտուրայի պատշաճ մակարդակ», որն ավելի ամբողջական կդարձնի սահմանման բովանդակությունը:

Խոսնելով այն մասին, թե ինչ ցանկալի արդյունքի կիասնենք վերոհիշտակված պայմանների և առհասարակ նույնարձնույթ գործունեության կատարմամբ, պետք է նշել, որ դրանով հանդերձ սկիզբ կդրվի մի նոր իրավական համապնտական միջոցառման, որը կրելու է տևական բնույթ, քանի որ ուսումնասիրենով արտասահմանյան զարգացած երկրների առաջավոր փորձը՝ ակնհայտ երևում է, որ այսպիսի գործընթացը նրանց մոտ հարյուրամյակներ է տևել:

Գրականություն

1. ԷՌՀ Սահմանադրություն (10 դեկտեմբերի 2006թ.), Ստենի., «Դիզակ-պլյուս» հրատ., 2006թ.:
2. Ն.Ա.Ապիյան, Ա.Ն.Ապիյան, Գ.Հ.Սաֆարյան, Իրավունքի տեսության հիմնահարցներ, Երևան, 2003:
3. Ն.Ա.Ապիյան, Ա.Հ.Պետրոսյան, Իրավական պնտություն և օրինականություն, Երևան, «Տիգրան Մեծ», 1999:
4. Սերգեյ Արզումանյան, Լիդա Գրիին, Իրավաբանական հոգեբանություն, Երևան, 2004թ.:
5. Н.А.Апиян, С.Н.Апиян, Правосознание, правовое воспитание, правовая культура, Ереван, 2001:
6. Гранат Н.Л., Правовое воспитание: понятие, формы и методы осуществления.-В кн.: Общая теория государства и права. Академический курс в 2-х томах. Том 2. Теория права.-Отв. ред. профессор М.Н.Марченко,-М.; “Зерцало”; 1998.
7. Теория государства и права. Под.ред.профессора М.Н.Марченко,-М.; “Зерцало”; 1996.
8. Русинов Р.К., Семитко А.П., Правовое воспитание и правовое обучение.-В.кн.: Теория государства и права. Учебник для юридических вузов и факультетов.-М.; “Норма-Инфра-М”, 1998.
9. Черниловский З.М., Всеобщая история государства и права. Учебник для вузов.-М.; “Высшая школа”, 1983.
10. Журнал “Советское государство и право”, 1976, N 1.
11. Архизадача-действовать по закону. Интервью с министром внутренних дел и национальной безопасности С.Саркисяном.-Եженедельник §02, 1997, 10 апр.

ԱրՊՀ, փիլիսոփայության և իրավունքի ամբիոն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի.Ս. Առարելյան		
907-Ր. ՀՐԴՎԱԾ: ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԾՈՒԹՅՈՒՆ		3
Ա.Ս. Ասրյան		
ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵջ		6
Ն.Գ. Հովսեփյան		
ՂԱՐԱԲԱԴՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, 1920Թ. ԱՄՈԱՆԸ. ՌՈՒՍԱԿԱՆ ՕԿՈՒՊԱՑԻԱՆ		13
Ս.Ա. Պողոսյան		
ԿԻԼԿԻՎՅԻ ՌԵԴՋՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԶՈՐԱՄԱՍ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ԾՐԱԳՐԵՐԸ 1914-1916 ԹԹ.		17
Խ. Ատելիանյան		
ՌՈՒԲԵՆ ՏԵՐ-ՄԻՆԱՅԱՅԻՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐԸ ՄԻԱՅՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԻ ՇՈՒՐՉ ...		24
Հ.Հ. Սոլեմնանյան		
ՀԱՅ ԴԱՏՆ ՈՒ ԱՐԴԻ ԹՈՒՐՔԻԱՆ		30
Ն.Լ. Օհանջանյան		
ՅԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱԴՈՒՄ 1805-1860-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ		35
Ա.Հ. Հարությունյան		
ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՌԸ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ		41
Հ. Փաշյան		
ԱՄՆ-Ի ԴԻՐԾՈՇՈՒԽԸ ԱՋՔԽԱՀ-ԼՂԻՄ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ՝ ԱՄՆ-ԽՍՀՄ ՀԱԿԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ		48
Ն.Ա. Աբրահամյան		
ԼՂԱ ԱՃԵԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՆ ԵՎ ԲՆԱԿՋՈՒԹՅԱՆ ՁԲԱՌԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՈՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ		55
Ա.Լ. Առատամյան		
ԼՂԱ ՍՈՅԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԿԱՆԴՐՆԵՐԸ		61
Մ.Գ. Աֆանասյան		
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ		66
Ե.Հ. Հայրիկյան		
ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃՐ		71
Ա. Հարությունյան		
ԾՐԱԳՐԱՅԻ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՆԵՐԿՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆԻՐՆԵՐԸ ԼՂԱ - ՈՒՄ.....		75
Ա. Հովսեփյան		
ԿԱԶՄԱԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՐՑԵՐԸ		79
Լ. Հովսեփյան		
ԵՐԳ ԵՐԳՈՅԻ ՀԱՎԵԼՎԱԾԸ ԵՎ ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՅԻՆ		87
Պ. Սահակյան		
ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ԱՊՐԱԾ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՆՐԱ «ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԱՐՅՈՒՐՆԵՐԻ ՊՐՈԲԼԵՄԸ		90
Р.Ա. Սարգսյան		
Օ ԿԻՐԵ Վ. ԳՐՈՍՍՄԱՆ “ԴՈԲՐՈ ՎԱՄ” (Проблемы взаимосвязей русской и армянской литературы)		96